

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԼԱԴԻՄԻՐ ԶՈՒԲԻՆ
“Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ” ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎԼԱԴԻՄԻՐ ԶՈՒԲ
ՈՐ Ի ՌՈՍՏՈՎ, ՌԴ**

Յարգարժան պրն. Վլադիմիր Զուբ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ՝ ռուս ժողովրդի արժանաւոր զաւակիդ, Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքները:

Այսօր առիթ ունենք Մեր բարձր գնահատանքը յղել Ձեզ՝ Ռոստովի հայկական Սուրբ Խաչ եկեղեցու վերաբացման ու բարեգարդման գործում Ձեր կարեւոր աւանդի համար: Փառաբանական աղօթքն է Մեր շուրթերին, որ պատմական սրբավայրը ամբողջապէս նորոգուած, վերստին կոչուում է սրբազան իր առաքելութեանը՝ ծառայելու Ռոստովի հայ համայնքի հոգեւոր ու ազգային կեանքի պայծառութեանը, հոգեւոր կենաց հացը մատուցելու բարեպաշտ հաւատացեալներին եւ քրիստոնէական լոյսը տարածելու մարդկանց հոգիներում:

Ձեր ազնիւ ու աստուածահաճոյ հովանաւորութեամբ նաեւ իր յետագայ գործունէութիւնն է շարունակելու հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամութեան թանգարանը, որ մեծապէս պիտի նպաստի նոր սերունդների կողմից հաւատակից մեր ազգերի պատմութեան ու բարեկամութեան արժեւորմանը՝ նոր ձեռքբերումներով հարստացնելու եւ բարեգարդելու դարերի ընթացքում նուիրագործուած եղբայրութիւնն ու ջերմ յարաբերութիւնները մեր երկրների ու ժողովուրդների:

Գովարժան է նաեւ Ձեր հետեւողական աջակցութիւնը Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ տնտեսական կապերի խորացմանն ու արդիւնաւորմանը եւ մեր երկու պետութիւնների բազմակողմանի հարաբերութիւնների առաւել զօրացմանը: Ձեր գործերով Դուք արժանապէս վաստակել էք անկեղծ սէրն ու երախտագիտութիւնը Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի թեմակալ առաջնորդի եւ Ռոստովի հաւատաւոր հայութեան, որոնց ազնիւ փափագն է Հայրապետական պարգեւով գնահատուած տեսնել Ձեզ:

Ի գնահատութիւն մեր Եկեղեցուն, մեր Երկրին ու հաւատաւոր ժողովրդին մատուցած Ձեր օգտաշատ ծառայութեանց եւ հայ հոգեւոր ու մշակութային ժառանգութեան հանդէպ հոգածու վերաբերմունքի, սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս Եպիսկոպոս Ներսիսեանի

2008

ԷԶՄԻԱԾԻՆ

Թ 31

խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Բարին Աստուած Իր օրհնութեան ներքոյ նորանոր յաջողութիւններ պարգեւի Ձեզ պատասխանատու Ձեր ծառայութեան մէջ՝ ի շինութիւն Ռուսիոյ օրհնեալ Երկրի եւ ի բարօրութիւն աստուածասէր ռուս ժողովրդի:

Թող ընտանեկան Ձեր յարկը շնորհընկալը լինի երկնապարգեւ շնորհների եւ Բարձրեալի առատ ողորմութեան:

Ողջ լերուք ի Տէր, գորացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 4-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2008 եւ ի թուին հայոց ՌՆԾԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 487